№ 69 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 18 **1894** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 18 № 69

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դատաստանական օրէնքների վերաքննութիւնը. Ընտրութեան գործը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հարկադրված պատասխան. Սովեաչների օգտին. Անցաթղթերի նոր օրէնք. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կազիմիր Պէրիէ. Ժանտախտը Հոնգ-Կոնգում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Օրվայ խնդիրը.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Մի երկրի կանոնաւոր զարգացման, քաղաքացիական կատարելագործութեան և քաղաքական առաջադիմութեան ամենագլխաւոր գործօններից մէկը կանոնաւոր, արդար և ժամանակի պահանջներին, երկրի կուլտուրական, տնտեսական և ընդհանուր քաղաքակրթութեան պայմաններին յարմարեցրած դատավարութիւնն է: Ամենաառաջադէմ, ամենազարգացած և մի և նոյն ժամանակ ամենազօրեղ ազգերը նրանք են, որոնք ունեն ամենակատարելագործված օրէնքներ: Որքան շատ ապահովութիւն է ընծայում մի երկրի օրէնքը այդ երկրի ազգաբնակութեան տնտեսական, մտաւոր և բարոյական զարգացման համար, որքան նա շատ երաշխաւորութիւն է տալիս դոյքի, անձնաւորութեան և պատուի պաշտպանութեան համար, այնքան այդ երկիրը իրան պատսպարված կարող է համարել ներքին և արտաքին վտանգներից, այնքան նա ապահով կերպով կարող է բարձրանալ լուսաւորութեան սանդուղքի աստիճաններով:

Ի՞նչ կը լինէր այժմ Ռուսաստանի պէս մի մեծ երկրի վիճակը, եթէ նա չը ստանար Ալէքսանդր II-ի 1861 թուի դատաստանական րէֆօրմները: Այդ տեսակ ռէֆօրմների շնորհիւն է, որ Ռուսաստանը կարողացաւ այնքան կարճ ժամանակում մտնել եւրօպական քաղաքակիրթ երկիրների դասի մէջ և կանգնել այսօր քաղաքակրթութեան շաւղի վրա: Ալէքսանդր II-ի ռէֆօրմները վերածնեցրին ամբողջ ռուս ժողովուրդը, կենդանութիւն, նոր հոսանք, թարմ, կենսարար հոսանք մտցրին նրա կեանքի մէջ և այնքան մղեցին նրան դէպի քաղաքակրթութիւն, անընդհատ առաջադիմութիւն, որ այսօր, 33 տարի անցնելուց յետոյ, նոյն իսկ այդ փրկաւէտ ռէֆօրմները անբաւական են նկատվում կեանքի պահանջների համար: Զգացվում է պէտք, կարևորութիւն վերաքննել դատաստանական օրէնքները, համապատասխան ժամանակի, գիտութեան և քաղաքակրթութեան նոր պահանջներին, համապատասխան այն ցուցմունքներին, որ հետզհետէ կատարելագործվող, զարգացող, բայց անողոք և խիստ կեանքը արել է: Այդ վերաքննութիւնը անհրաժեշտ էր և այն տեսակէտից, որ վերջին տասնեակ տարիների ընթացքում նորանոր, մասնաւոր կանոնադրութիւններ, բացառական օրէնքներ, արտակարգ միջոցներ հետզհետէ հրատարակվելով, առաջ են բերել շփոթութիւն և խառնակութիւն ընդհանուր դատավարութեան գործի մէջ:

Եւ ահա Բարձրագոյն հրամանով մի քանի ժամանակ առաջ կազմվեց արդարադատութեան մինիստրութեան մէջ մի մասնաժողով, որին և յանձնվեց մշակել դատաստանական օրէնքների վերաքննութեան ծրագիրը:

Այդ մասնաժողովի առաջին նիստում արդարադատութեան մինիստր Մուրավիէվ մի նշանաւոր ճառ խօսեց, որի վրա մայրաքաղաքների լրագիրները մատնացոյց են անում՝ իբրև մեծ կարևորութիւն ունեցող քաղաքական մի պէպքի վրա:

Եւ ճշմարիտ, ահագին է այդ ճառի քաղաքական և պատմական նշանակութիւնը: Այդ ճառը որոշում է Ռուսաստանի ամբողջ դատավարութեան ապագան, ժողովրդի բաղդը, որովհետև այդ ճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բացատրութիւն այն հիմունքների, որոնց վրա պէտք է կառուցվի դատաստանական նոր կանոնների ամբողջ շինուածքը: Վաղուց է, որ ռուսաց պահպանողական և խաւարամիտ կուսակցութիւնը կատաղի պայքար է մղում Ալէքսանդր II-ի դատաստանական ռէֆօրմների դէմ և Ռուսաստանի միակ փրկութիւնը, հզօրութիւնը գտնում է անդրէֆօրմեան ռէժիմին վերադառնալու մէջ. վաղուց է, որ նա ամէն կերպ աշխատում է յետ տանել երկիրը դէպի ճորտութիւն, դէպի հին դատավարութեան ժամանակները, երբ ամէն տեղ տիրապետում էր կամայականութիւն, կաշառակերութիւն և թագաւորում էր սարսափելի զեղծում: Իսկ առաջադէմ, ազատամիտ կուսակցութիւնը, լայն սկզբունքների տէր և առողջամիտ մարդիկ, երկրի հարազատ բարեկամները նոյնչափ կատաղի կերպով քարոզում են այն գաղափարը, որ Ռուսաստանի համար կատարեալ մահ կը լինի անդրէֆօրմեան ժամանակներին վերադառնալը, որ նրա ապագայ բարեկեցութեան, հզօրութեան և երջանկութեան միակ պայմանն է առաջ՝ և առաջ ընթանալ այն ճանապարհով, որ բացել է Ալէքսանդր II-ի դատաստանական ռէֆօրմը:

Հասկանալի է, որ երբ կայացաւ վերաքննութեան հրամանը, վերին տստիճանի կարևոր էր իմանալ, թէ ինչ դիրք կը բռնի, ինչ հայեացք կունենայ ինքն կառավարութիւնը դէպի այդ երկու աշխարհայեցողութիւնը և ինչ ծրագիր է առաջարկում նա վերաքննութեան համար:

Եւ ահա մինիստրի ճառը փարատում է ամէն կասկած: Նա բացատրում է այն էական կէտերը, որոնց հիման վրա Բարձրագոյն իշխանութիւնը կամենում է կատարել տալ վերանորոգութիւնը: Առաջ ենք բերում արդարադատութեան մինիստրի ասածների գլխաւոր կէտերը:

1) Դատաստանը պէտք է լինի բերանացի, անմիջական, այն է դատաւորն ինքն անձամբ պէտք է լսի և տեսնի դատվողներին և ոչ թէ դատէ թղթերի հիման վրա:

2) Դատաստանը պէտք է լինի հրապարակական, հասարակութիւնը պէտք է իմանայ, թէ ինչ է կատարվում դատարանում և ինչպէս է տեղի ունենում արդարադատութիւնը:

3) Դատարանը պէտք է լինի մրցողական, պէտք է երկու դատվող կողմերն ևս ներկայ լինեն, որ նրանց վիճաբանութիւնից բղխի ճշմարտութիւնը:

4) Դատաստանը պէտք է լինի պետական և մի և նոյն ժամանակ անկախ կողմնակի ազդեցութիւններից ու ձնշումներից, որպէս զի դատաւորը կարողանայ կատարել իր պարտաւորութիւնը ոչնչից և ոչ ոքից երկիւղ չը կրելով, և ղեկավարվելով միայն օրէնքով, իր խղճմտանքով և փաստերով: Այդ փաստերը պէտք է լսել, և գործել խղճմտանքով, ազատ ներքին համոզմունքով, և ոչ ձևականութիւնով:

5) Որոշ պարագաներում դատաստանը պէտք է կատարվի հասարակական տարրի մասնակցութեամբ:

Այս կէտերը այլ ևս կասկած չեն թողնում, որ հին կարգերին վերադառնալու խնդիրը անդարձ կերպով թաղված է և երբէք այլ ևս յարութիւն առնել չէ կարող: Այդ տեսակ լայն հիմքերի վրա դրված դատարանը — արդարադատութեան յաղթանակն է:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Դարձեալ մեծ ընտրութիւններ Թիֆլիսում: Վաղը, կիրակի, Թիֆլիսի 23 եկեղեցիներում պէտք է կատարվեն ընտրութիւններ: Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներ ընտրելու գործում մասնակցում է Թիֆլիսի ամբողջ հայ լուսաւորչական ժողովուրդը: Իւրաքանչիւր եկեղեցի ընտրում է երեք պատգամաւոր, որոնք յետոյ միասին գումարվելով՝ ընտրում են դպրոցի համար 12 հոգաբարձուներ և 4 անձնափոխանորդներ:

Զը նայելով, որ ընտրութիւնները պէտք է կատարվեն շատ մեծ դիրքով, բոլոր քսան երեք եկեղեցիներում, սակայն կարող են շատ հանգիստ և խաղաղ անցնել, եթէ ուշք դարձված կը լինի այն բանի վրա, որ աւելորդ թիւրիմացութիւններ չը ծագեն ընտրողների իրաւունքները սահմանափակելուց, և եթէ ընտրութիւններին հսկող նախագահները ամենաանաչառ և հմուտ կերպով կը կարողանան ղեկավարել գործը:

Ոչ մի բան այնքան չէ վնասում ընտրողական գործին, որչափ իրաւասութեան սահմանների անորոշութիւնը, կամ նրանց այնպիսի փոփոխութիւնը, որ անակնկալ և անսպասելի սահմանափակումներ է մտցնում ժողովրդի իրաւունքների մէջ:

Ընտրողական գործը պէտք է այնպէս կատարվի, որ ընտրողը չը զգայ իրան զրկված իր իրաւունքներից, որ նա մի որ և է իրանից անկախ զանցառութեան պատճառով չը կորցնի իր ձայնը: Նրա համար պէտք է հիշատակված լինեն բոլոր ճանապարհները՝ արտայայտելու իր կամքը ամենակատարեալ կերպով:

Նա մանաւանդ այժմեան հանգամանքներում, երբ մեր ժողովուրդը ընտրութիւններին սկսել է տալ մի առանձին նշանակութիւն, երբ ընտրողական ցուցակների կազմութիւնից պարզ երևում է, որ թեկնածուների վերաբերմամբ ընտրողների կարծիքը միմեանցից շատ տարբեր են, երբ յաճախ մի երկու ձայնից կախված է լինում այս կամ այն թեկնածուի ընտրված լինելը, —պահանջվում է ամենաաչալուրջ վերաբերմունք այն անձերի կողմից, որոնց յանձնված է ընտրութիւնների վերահսկողութիւնը:

Երբ ընտրութիւնը կանոնաւորված է և ոչ մի թիւրիմացութեան տեղիք չէ մնում, ոչ ոք իր իրաւունքները խախտված չէ զգում, այն ժամանակ ընտրողական գործը, կարգադրում է անյապաղ ընտրութիւն անել, առաջնորդն էլ որոշում է ընտրութեան օրը, ժողովուրդը վերջապէս յոյս ունի, որ վերջ կը դրվի այդ 8 տարվայ խայտառակութիւններին, և ահա, այն մարդիկ, որոնք յարմար միջոցին քարոզում են «անպայման հնազանդութիւն», որոնք գոռում են՝ «սուրբ է Կաթողիկոսի կամքը և օրէնք», թոյլ են տալիս իրանց ամենախորամանկ միջոցների դիմել, որ ընտրութիւնը էլի յետաձգվի, էլի չը կայանայ:

Բայց մինչև երբ:

Այդ մարդիկ, որոնց թիւը երկու ջուխտ մի կենտ է, այնքան ինքնամոռացութեան են հասել, որ չեն հասկանում, թէ այդքան յանդուգն կերպով վերաբերվել ժողովրդի իրաւունքներին,—չի լինի: Խաղալիք է, ինչ է, ժողովուրդը ձեզ համար: Ընտրութիւն է նշանակվում, ժողովուրդը պատրաստվում է եկեղեցի գնալ և իր ծխական պարտքը կատարել,—և ահա փորձում են նորից խանգարել, նորից յետաձգել:

Եւ գիտէք, ընթերցող, ինչ է պատճառը, որ ուզում են ընտրութիւնը գոնէ մինչև սեպտեմբեր յետաձգել: Այդ հարցը շատ սրամիտ կերպով պարզեց իմ մի ծանօթը, այսպէս. «Նրանք լաւ գիտեն,— հոգաբարձու մնալը, և իրանց մարդկանց «տեղ տալը» այնքան կուրացրել է այդ անձանց, որ մոռացել են օրէնք, կանոն, իրաւունք, արդարութիւն:

Ինչեր ասէք, որ չեն անում: Սրանից մի ամիս առաջ յանձնաժողով կազմեցին և յանդգնութիւն ունեցան մշակել մի անարդար «Կանոնք», որի զօրութեամբ ծխականը ծուխ չէ, եթէ առաջնորդը կամ քահանան չեն կամենում. որի զօրութեամբ, ծխականը կարող է և ընտրութեան իրաւունք ստանալ և չը ստանալ, նայած թէ ինչպէս է տալիս իշխանութեան քէֆը...

Եւ ահա, երբ հասարակութիւնը, յանուն ծխական իրաւունքների, յանուն արդարութեան բողոքեց, և թեմական առաջնորդը արդար գտնելով այդ բողոքը, փոփոխեց այդ անարդար կէտերը, նոյն մարդիկ, որոնք դեռ երէկ խօսք չէին զըտնում գովելու Սուրէնեան եպիսկոպոսի իրաւանչիւր քայլը, շարժուածքը, ասածը,—այսօր, առանց ամօթ զգալու ասում են առաջնորդին,—ինչ իրաւունքով փոխեցիք «Կանոնքը». մշակել, տուել էին ձեզ, դուք էլ ընդունել էիք, ինչպէս թոյլ տուեցիք ձեզ, առանց հարցնելու Եւանդուլեանի, Կոստանեանի, Սիմոնեանի, Բեհբուդեանի կամքը, մի տառ անգամ փոխել: Միթէ չը գիտէիք, որ այդ «Կանոնքը» մենք կազմել էինք, որ գոնէ այդ միջոցով ընտրվենք և չը սևանանք եկեղեցիներում:

Այդպէս են այդ մարդիկ. ոտներ են լիզում, չողոքորթութիւններ են անում, ստրուկի նման մէջքները մինչև գետին կռացնում են, երբ իրանց քէֆով են շարժվում, իրանց կամքն են կատարում, իրանց կողմն են անցնում: Բայց հէնց որ այդ նոյն մարդը, որին երէկ չողոքորթում, խընկարկում, ոտները լիզում էին, այսօր իրանց ասածով չը մտնում, իսկոյն կը դառնան թըշնամի, հակառակորդ:

ԽՀՂՃ մարդիկ:

—

Այլ առակ լուսարուք:

Այս օրերս Աբգար Յովհաննիսեան մօտ քսան մարդու ստորագրութեամբ դիմել է Էջմիածին, վերհափաւին, խնդրելով որ հոգաբարձական ընտրութիւնները յետաձգվեն: Մինչև անգամ մի հեռագիր էլ ուղարկված է մի եպիսկոպոսի, որ նա էլ միջամտէ, խնդրէ, աջողեցնէ:

Աֆֆերիմ:

Կաթողիկոսը կոնդակով ընտրութիւն է նշանակում, կարգադրում է անյապաղ ընտրութիւն անել, առաջնորդն էլ որոշում է ընտրութեան օրը, ժողովուրդը վերջապէս յոյս ունի, որ վերջ կը դրվի այդ 8 տարվայ խայտառակութիւններին, և ահա, այն մարդիկ, որոնք յարմար միջոցին քարոզում են «անպայման հնազանդութիւն», որոնք գոռում են՝ «սուրբ է Կաթողիկոսի կամքը և օրէնք», թոյլ են տալիս իրանց ամենախորամանկ միջոցների դիմել, որ ընտրութիւնը էլի յետաձգվի, էլի չը կայանայ:

Բայց մինչև երբ:

Այդ մարդիկ, որոնց թիւը երկու ջուխտ մի կենտ է, այնքան ինքնամոռացութեան են հասել, որ չեն հասկանում, թէ այդքան յանդուգն կերպով վերաբերվել ժողովրդի իրաւունքներին,—չի լինի: Խաղալիք է, ինչ է, ժողովուրդը ձեզ համար: Ընտրութիւն է նշանակվում, ժողովուրդը պատրաստվում է եկեղեցի գնալ և իր ծխական պարտքը կատարել,—և ահա փորձում են նորից խանգարել, նորից յետաձգել:

Եւ գիտէք, ընթերցող, ինչ է պատճառը, որ ուզում են ընտրութիւնը գոնէ մինչև սեպտեմբեր յետաձգել: Այդ հարցը շատ սրամիտ կերպով պարզեց իմ մի ծանօթը, այսպէս. «Նրանք լաւ գիտեն,—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՎԱՑ ԽՆԴԻՐԸ

II

Խաւարամիտների բանակում տիրում է կատարեալ յուսահատութիւն...

Վազում են այս կողմ, վազում են այն կողմ, մութ անկիւններում փախսում, մերթ աղերսում, մերթ սպառնում, մերթ լաց լինում...

Եւ այդ բոլորը նրա համար, որ Աքիմեան, Եւանդուլեան, Յովհաննիսեան, Բեհբուդեան կամ դրանց նմանները Ներսիսեան դպրոցում հոգաբարձու մնան. և հոգաբարձու մնալով՝ լցնեն դպրոցը Կոստանեաններով, տէր-Գիւտերով, Բարամեաններով, Յովհաննիսեաններով, Կանայեաններով... վարժապետներ, որոնց ամենամեծ արժանաւորութիւնն այն է, որ Պետրոս Սիմոնեանի, Գէորգ Եւանդուլեանի, Աբգար Յովհաննիսեանի և Գէորգ Աքիմեանի առաջ ծունկ են չոքում այնպէս, ինչպէս հին դարերի կռապաշտները՝ կուռքերի առաջ...

—

գործի ընթացքը ապահովված է։ Աջող և հմուտ կարգադրութիւններով կարելի է տասնեակ եկեղեցիներում ընտրութիւններ կատարել ամենադիւրին կերպով, իսկ սխալ կերպով տարած ընտրողական գործը նոյն իսկ մի եկեղեցում չի աջողվի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ

«Արձագանքը» տպեց մի բողոք Բաթումից։

Մենք ապացուցեցինք, պ. Ա. Դաստակեանի թղթակցութեամբ, որ այդ բողոքը կեղծ է, սուտ է, չինծու է, խաբեբայական է։ Եւ այդ ապացուցվեց թւերով, փաստերով, անկողմնապահ քննութեամբ։

«Արձագանքը» ստացաւ այդ ապտակը և լռեց։

Եւ թողած բուն հարցը, մի քանի ժամանակից յետոյ, այդ խայտառակ թերթը սկսեց կրկնել, որ Բաթումի յօդուածագիրների վարմունքը՝ անվայել վարմունք է, խուլգարկութիւն է։

Մենք դրան էլ պատասխանեցինք, բժ. Թ. Զաքարեանի թղթակցութեամբ, որ դա ոչ թէ խուլգարկութիւն է, այլ մի վայելուչ, ազնիւ և անկողմնապահ միջոց՝ ինդիրը պարզելու, և աֆերիստների խաչագողութիւնների առաջն առնելու համար։

«Արձագանքը» այդ էլ կուլ տուեց։

Եւ ահա խայտառակված, բոլորովին ամօթահար մնացած, այդ ողորմելի թերթը ուրիշ միջոց չը գտաւ, և նորից դիմեց այն ստոր, բութ և ծիծաղելի միջոցին, որին դիմում են բոլոր աֆերիստները, երբ ուրիշ ելք չունեն, ուրիշ միջոց չունեն։

Դա մատնութիւն է,—ասում է նա, և գիտէք ով է ասողը, Աբգար Յովհաննիսեան, որի մտերիմ բարեկամներին և խորհրդատուներին հայ հասարակութիւնը լաւ է ճանաչում։

Սակայն ինչի մէջն է հարցը։ Ահա ինչի մէջ։

«Մշակի» № 63-ում Բաթումի մեր յօդուածագիրը, պ. Դաստակեան, բացատրելով, թէ ինչ խայտառակ ու կեղծ միջոցներով չինված էր այն տխրահռչակ բողոքը, գնահատում է այդ բողոքը, կազմողի բարոյականութիւնը և գործ դրած ստոր միջոցները։ Որովհետև այդ պարոնը «Վ» տառով է ստորագրված «Արձագանքում», ուստի մեր յօդուածագիրը ծանօթութեան մէջ նկատում է հետևեալը.

«Պ. «Վ», բողոքագրի կազմողը, նրան «զլուխ բերողը», թէև գուցէ ոչ գլխաւոր հեղինակը, «Արձագանքում» տպված յօդուածի տակ համեստաբար ծածկվել է «Վ» տառի տակ։ Մենք ևս յարգելով ազնիւ պարոնի... համեստութիւնը, թողնենք նրան ծածկված իր գեղեցիկ դիմակի տակ։ Այս նոյն պարոնի մասին ասում են, որ նա է արտասահմանի լրագիրներից մէկում հայոյական և կեղտոտ յօդուածներ գրողը մի քանի անձանց դէմ»։

Առողջ դատողութեան տէր ընթերցողն այս տողերից կարող է հասկանալ միայն այս, որպ. Դաստակեան գիտէ, թէ ով է «Վ» ստորագրվող պարոնը, բայց հարկ չէ համարում բացանել. եւ որ այդ «Վ»-ի մասնագիտութիւնն է գրական կեղտոտութիւններ անել, մի քանի անձանց վարկը ձգել արտասահմանի լրագիրներում, ու նոյն կեղտոտութիւնները գործ է դնում և Ռուսաստանի լրագիրներում։

Այսպէս ընորոշել կարեոր էր «Վ»-ին, որպէս զի ընթերցողը հակացողութիւն կազմէր նրա բարոյականութեան մասին և ըստ այնմ գնահատէր «Բաթումի բազմատորագիր բողոքը», որ նա խարդախելով չինել է։

«Մշակի» յիշեալ տողերի ապվելուց յետոյ, «Արձագանքը» 13 օր շարունակ մտածելով՝ մի գիւտ է արել, որ իր վերջին համարի մի ամբողջ առաջնորդողում աշխարհ է բերում, ասելով թէ այդ տողերը .. մատնութիւն են։

Մատնութիւն է, ասում են։ Սակայն ո՞ւմ դէմ։ Մի «Վ» տառի դէմ։ Ով է այդ «Վ» տառը,—ոչ ոք չը գիտէ։ Գիտէ միայն յօդուածագիրը և նա էլ ազնութեամբ բաց չէ անում այդ խայտառակ անունը։ Ուրեմն մէջտեղ անձնաւորութիւն չը կայ, այլ կայ մի «Վ» տառ, որ չինծու բողոքներ է տպագրում «Արձագանքի» էջերում, և վերջերս էլ սկսել է հայհոյանքներ գրել արտասահմանի մի լրագրում։

Որն է այն արտասահմանի լրագիրը.—ոչ ոք չէ հետաքրքրվում։ Միայն թէ այդ լրագրից «Արձագանքը» արտասպում է նոյն «Վ»-ի գրած հայհոյանքները ուղղված մի քանի յայտնի անձանց դէմ։ Այդ բաւական չէ. «Արձագանքը» արտասպելով այդ խայտառակ յօդուածները, ներքև մինչև անգամ դնում է լրագրի անունը։ Հասկանում էք, լրագրի անունը։

Ուրեմն, եթէ այդ արտասահմանի լրագրից կարելի է յօդուածներ արտասպել, եթէ կարելի է մինչև իսկ նրա անունը յիշել, եթէ կարելի է վերջապէս գովաբանել այդ «Վ»-ի յօդուածները, ինչու «Մշակը» չէ կարող ասել, թէ այդ նոյն՝ «Վ» ոչ միայն չինծու բողոքներ է կազմում, այլև հայհոյանքներ է գրում, արտասահմանի այդ լրագրում, մի քանի անձանց դէմ։

Ի հարկէ, կարելի է և պէտք է, քանի որ դա է այդ անյայտ, անծանօթ «Վ»-ի բարոյական յատկութիւնը որոշող չափը։

Այդ լաւ գիտէ և «Արձագանքը», այդ լաւ գիտէ և Աբգար Յովհաննիսեան։

Սակայն հարկաւոր է այս «ճգնաժամին» մի նոր ֆոկուս անել,—և ահա «Արձագանքը» այդ էլ արաւ։ Սակայն ի մեծ ցաւ այդ նենգամիտ եղուիտների, հասարակութիւնը այլ ևս այնքան յիմար չէ և տգէտ, որ այդպիսի ֆոկուսներից խաբվի։ Ֆոկուսնիկներին նա վաղուց գիտէ և ճանաչում։

Եւ միթէ սա նոր բան է։ Թիֆլիսի յայտնի խումբը, եղուիտների յայտնի շրջանը վաղուց է վարժվել այդ միջոցների մէջ։

Տարիների ընթացքում, երբ տեսան, թէ ոչինչ չեն կարողանում անել «Մշակի» և Գրիգոր Արծրունու դէմ, սկսեցին մոլորեցնել ամբոխը, գոչելով. «Նա քանդում է հայոց եկեղեցին»։

Երբ տեսան, որ այդ էլ չէ ազդում, սկսեցին գոռալ՝ «Մշակը» ազգակործան է, Արծրունին ազգի դաւաճան»։

Հայ հասարակութիւնը շատ լաւ է յիշում, թէ ինչ են գրել «Մշակի» և Գրիգոր Արծրունու դէմ թէ «Մեղուն», թէ «Արձագանքը» և թէ նրանց խայտառակ բարեկամները,—կրկնելով թէ Արծրունին դաւաճան է, և «Մշակը» վարձված...

Միթէ նոյնը չէին ասում 60-ական թւականների Խաւարամիտները Նաղարեանի համար։

Միթէ նոյնը չէին ասում 40-ական թւականներին Ներսէս Աշտարակեցու հակառակորդները նրա մասին։

Եղուիտները ամեն տեղ, ամեն ժամանակ, ամեն երկրում նոյնն են. «Նպատակը սրբում է միջոցը» ասում են, և ուրիշի չվնաս տալ՝ այն, ինչ իրանց արհեստն է, իրանց փէշակը, իրանց զբաղմունքը։

Ցիշում էք, պ. Աբգար Յովհաննիսեան, ինչ գրեցիք դուք ձեր խայտառակ թերթում Ներսիսեան դպրոցի տեսուչ Սպենդիարեանի մասին. յիշում էք, թէ անցեալ տարի ինչ գրեցիք ուսանող Տիգրան Յովհաննիսեանի մասին, յիշում էք, թէ ինչ գրեցին ձեր դաշնակիցները «Ս. Կ.-ի համար հաւաքված փողերի» մասին. յիշում էք վերջապէս անցեալ տարի...

Սակայն թողնենք. նատեցէք դուք և ձեր բարեկամները մի կէս ժամ ձեր սենեակի մէջ, փակեցէք դռները, բաց արէք ձեր խիղճը, յիշեցէք այն բոլորը, ինչ արել էք և յետոյ փողոցով անցնելիս՝ փորձեցէք ուղիղ նայել մարդկանց երեսին... կը կարմրէք, գետինը կը մտնէք։

Հասկացա՞ք։

—

Այդ դառն խօսքերից յետոյ մեզ մնում է յայտնել մեր խորին զզուանութիւնը և ցաւը, որ ստիպված ենք գրական էջերում պատասխանել այդ տեսակ մարդկանց և զբաղվել այսպիսի տրխուր և անախորժ հարցերով։

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովեալների օգտին.

1) Պետերբուրգից, ուսանող Վ. Տէր-Կիրակոսեանի միջոցով հանգանակած 10 ռուբլի՝ յօգուտ Ալէքսանդրօպոլի սովեալների։

2) Թիֆլիսից, Յարութիւն Միրիմանեանից 1 ռուբլի, և նրա միջոցով Նաթլուղի դպրոցի աշակերտներից հանգանակած 2 ռուբլի։

3) Ղզլարից, Գէորգ Շաթիրեանի և Մկրտիչ Դասպարեանի միջոցով այնտեղ հանգանակած 32 ռուբլի, յօգուտ Էրզրումի նահանգի սովեալների։

4) Բալախանից, Եղբ. Նաթաթեանների նաթահանքի կառավարչից (ստորագրութիւնը անկարդալի) միջոցով 42 ռ. 75 կոպէկ՝ հանգանակված այդ նաթահանքի ծառայողներից։

5) Բաղուից, Ղազարոս Եղիազարեանի միջոցով, մի խումբ երիտասարդների մէջ հանգանակած 15 ռուբլի, Վեհափառին ուղարկելու համար։

Ուրեմն նախկին 406 ռուբլի 84 կ. հետ այժմ ունենք 509 ռուբլի 59 կոպէկ։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6460 ռուբլի 44 կ.։ Ուղարկել ենք 5951 ռուբլի։

ԱՆՑԱԹՂԹԵՐԻ ՆՈՐ ՕՐԷՆՔ

—

Ռուսաց մամուլը վաղուց է յարուցել անցաթղթերի բարեփոխութեան խնդիրը և մի քանի անգամ նոյն իսկ կառավարչական շրջաններում այդ նպատակով կազմվել են նախագծեր։

Ինչպէս յայտնի է, այժմ իւրաքանչիւր մարդ Ռուսաստանում, մի տեղից միւս տեղ տեղափոխվելու ժամանակ, պէտք է անցաթուղթ ունենայ և եթէ նա այդ անցաթուղթը չունի, նրան վերադարձնում են իր ծննդավայրը։

Անցաթուղթ պահանջելը երկու հիմք ունի. մէկն այն է, որ դրանով կարելի է միշտ իմանալ ամեն մարդու անձնաւորութիւնը, ինչ տեղի բնակիչ լինելը, երկրորդ՝ գանձարանը մի յայտնի եկամուտ ունի, որովհետև անցաթուղթ ստանալու համար սահմանված է մի որոշ տուրք։

Սակայն անցաթղթերի պարտաւորեցուցիչ լինելը ունի իր մի շարք խոշոր անյարմարութիւնները, որոնք առաջ են բերում տնտեսական վնասներ ազգաբնակութեան համար և որոնք յաճախ գերակշռում են այն օգուտը, որ նրանցից սպասվում է։ Օրինակ, մի գիւղացի, որ վերջացրել է իր գիւղատնտեսական պարապմունքները, չէ կարող իսկոյն և եթէ ճանապարհ ընկնել դէպի այն տեղերը, ուր շահաւէտ գործ կայ նրա համար, մինչև ձեռք չը բերի անցաթուղթ, որը ստանալու համար նա պէտք է մի քանի ձեակնութիւններ կատարէ և երբեմն նոյն իսկ գաւառական ատեանը գնայ և անձամբ ներկայանայ։ Այդ ծախսերը, այդ նեղութիւնները այնքան դժուարացնում են գործը, որ շատ անգամ գիւղացին վճռում է նոյն իսկ զրկվել շահաւէտ աշխատանքից և մնալ տանը։

Աշխատող դասակարգի համար անցաթղթերի պահանջը մանաւանդ ծանր է դառնում այն ժամանակ, երբ յանկարծ աշխատող ձեռքերի մեծ պահանջ է զգացվում և երբ ուշանալը—նշանակում է գործը կորցնել բոլորովին։ Այդպէս են ամեն տարի կրկնվող այն դէպքերը, երբ առատ հունձը պահանջում է մեծ թիւով մշակներ։

Կառավարութիւնը զգալով անցաթղթերի ներկայ կարգի անյարմարութիւնները, այժմ անում է բարեփոխութեան առաջին քայլը և հրատարակել է դիւրացնող կանոններ առայժմ եւրոպական Ռուսաստանի համար։ Նոր օրէնքով անցաթուղթը պարտաւորեցուցիչ չէ այլ ևս։ Ամեն մարդ կարող է ազատ տեղափոխվել երկրի սահմաններում. միայն պէտք է կարողանայ, ըստ պահանջման՝ ապացուցանել իր ով լինելը։

Այդպիսով շատ հեշտանում է այն գործը, որ իւրաքանչիւր ճանապարհորդի, իւրաքանչիւր տեղից տեղ գնացողի համար մի անտանելի ծանրութիւն էր թվում։

Կովկասում նոր օրէնքի դիւրութիւնը առ այժմ տրվում է միայն արտօնաւոր դասակարգերին։

Ցանկալի է և յոյս կայ, որ շուտով նա աւելի մեծ գործադրութիւն կը ստանայ և կը տարածվի բոլոր դասակարգերի վրա։

—

որ հոգաբարձութեան վախճանը հասել է, յոյս չունեն, որ կարողանան ընտրվել, ոչ այժմ, և ոչ էլ սեպտեմբերին։ Միայն մի բան կայ։ Եթէ հոգաբարձութիւնը այժմ ընտրվի, կարող է հաստատվել, յուլիսին պաշտօնի մէջ մտնել, և փոփոխութիւններ անել ուսուցչական խմբի մէջ։ Մինչդեռ, եթէ ընտրութիւնը կատարվի սեպտեմբերին, նոր հոգաբարձութիւնը պաշտօնի մէջ մտնելով մօտաւորապէս նոյեմբերին, երբ արդէն ուսումնական տարին սկսված կը լինի, ձեռք չի տայ խմբին, ամբողջապէս կը պահի, և այդպիսով այժմեան խումբը էլի մի տարի կը մնայ»։

Եւ աւելի ճիշդ, աւելի սրամիտ բացատրութիւն չէ կարելի գտնել, քան այդ խօսքերը։

Միայն մի բան մեզ ապշեցնում է. միթէ, յիրաւի, կան մարդիկ, որոնք այնքան ընկել են, և այնքան կորցրել իրանց պատիւը, որ տեղի համար, իրանց բարեկամներին պաշտօն տալու համար, ընդունակ են դիմել այդպիսի անվայել միջոցների...

—

Անկեղծ ասեմ, ես խղճում եմ դրանց։ «Տէրը դրանց հետ, մտածում եմ, թող մնան իրանց սիրած այդ բոյնի մէջ, Ներսիսեան դպրոցի մէջ, և իրաւունքն է վաղը կատարած ընտրութիւնները քանդել (լաւ կարդացէք) և դպրոցի մասին իր կարգադրութիւնն անել...» (լաւ կարդացէք)։

Բայց գիտէք, ընթերցող, ինչ կը նշանակեն այդ խօսքերը և այդ բազմակէտերը։ Այդ այն կը նշանակէ, որ եթէ հարկաւոր լինի՝ Կաթողիկոսը այդ նոր ընտրութիւնն էլ կը քանդէ. և այդ բաւական չէ, մինչև իսկ «դպրոցի մասին իր կարգադրութիւնը կանի», այսինքն կը նշանակէ իր կողմից հոգաբարձուներ, իր ցանկացած մարդկանց։

Ահա թէ ինչ յանդուգն, անվայել, նոյն իսկ անպատաբեր կարծիք ունեն այդ եղուիտները ամենայն հայոց Կաթողիկոսի մասին։

Աւելի քան 70 տարի է գոյութիւն ունի Ներսիսեան դպրոցը, և նրա հոգաբարձուները միշտ եղել են ընտրված ժողովրդից, և ոչ մի կաթողիկոս իրան թոյլ չէ տուել խլել ժողովրդի ձեռքից նրա ընտրողական իրաւունքը ու իր կողմից նշանակել հոգաբարձուներ։ Եթէ այդ չէ արել նոյն իսկ Մակար կաթողիկոսը, երբէք չի անի Վեհափառ Խրիմեան, որը միշտ կողմնակից է եղել ժողովրդին և պաշտպան ընտրողական սկզբունքի։

Մեզ միայն զարմացնում է, թէ ինչու համար, ինչ յոյսերով, և ինչ հիման վրա մեր խաւարամիտները սկսել են այդ տեսակ յոյսեր տածել և այդ աստիճանի անձարձակ, խայտառակ ենթադրութիւններ անել...

—

Բաւական է։ Ինտրիգներ լարելով, հարցը խճճելով, հեռագիրներ խփելով, անարդար «Կանոնների» պաշտպան հանդիսանալով, զուռալ՝ ոչինչ չի լինի։

Վաղը ընտրութիւն է։

Գէթ այժմ թող լռեն կրքերը։ Թող թեմական իշխանութիւնը կատարէ իր պարտաւորութիւնը, և զգուշացնէ քահանաներին, որ անկանոնութիւններ չանեն, ճնշումներ չը գործ դնեն, ժողովրդին չը գրգռեն. իսկ ժողովուրդն էլ թող շտապի եկեղեցիները, և արդար խղճով, դիտակցօրէն կատարէ իր ընտրութիւնը։

Մի կողմից խիստ կարգապահութիւն, միւս կողմից՝ իր իրաւունքների խիստ պաշտպանութիւն,—ահա ինչ ենք ցանկանում վաղվայ ընտրողներին։

*

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 12-ին

Այսօր երկրորդ անգամ նշանակված էր ծխական պատգամաւորների ընտրութիւն ս. Պողոս և Պետրոս եկեղեցում, որոնք իրանց կողմից ընտրելու են երկու հոգաբարձու և երկու անձնափոխանորդ՝ Գայիանեան օրիորդաց դպրոցի համար։ Պէտք է ընտրվէին 12 պատգամաւորներ, բացի երէցփոխից։

Յաւալի է, որ 500 ծուխ ունեցող եկեղեցում ընտրութեանը մասնակցում են միմիայն 50 հոգի։ Այսպիսի վերաբերմունք դէպի դպրոցը, ի հարկէ, դատապարտելի է։ Մխիթարականը միայն այն էր, որ ընտրողները ընտրում էին գիտակցօրէն, և հակառակ խաւարամիտների ջանքերի, աղաների կռիւների և, վերջապէս, հակառակ աղա երէցփոխի սպասելիքների և ջանքերի, ընտրութիւնը վերջացաւ կատարեալ աջողութեամբ։ Զայների ահագին մեծամասնութեամբ ընտրվեցին։ Յ. Մէլիքեանց, Վասիլ Եղիազարեանց, Գ. Տէր-Խաչատրեանց, Գ. Ալօեանց, Ռ. Ջալալեանց, Գ. Ահարոնեանց, Տ. Վարդանեանց, Գ. Անտոնեանց, Բ. Եղիազարեանց, Յ. Նազարէթեանց, Վ. Պողոսեանց և Ա. Աֆրիկեանց։ (Ի միջի այլոց սեացաւ Վարդան Եղիազարեան)։ Եւ այսպիսով խաւարամիտ խմբակը փչրված՝ թողեց և հեռացաւ։

Մի նորութիւն, որ այժմ պատում է բերանից բերան, այդ թեմական դպրոցի ուսուցիչների գիւտն է.—Նրանք այժմեանից լուր են տարածում, որ հոգաբարձութիւնը իրաւունք չունի իրանց հեռացնել և որ ուսուցիչներին կարող է պահել կամ արձակել միայն փոխանորդը՝ Կիւրեղ վարդապետը։ Մինթ կարծում են, թէ դրանով կարող են իրանց նպատակին հասնել։ Սխալվում են։

Ամսիս 10-ին, երեկոյեան ժամի 8-ին, Վեհափառ Կաթողիկոսը, փոքրաթիւ սվիտայով, մուտք գործեց Երևան։ Գալու պատճառը անյայտ է։ Յաջորդ օրը, ժամի 5-ին, Աչտարակ գիւղի վրայով ուղևորվեց Բիւրական ամարանոց։

Ա—Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են հետևեալը. «Թիւրք կառավարութիւնը արգելեց ոչ թէ միայն զանազան գրքեր, դասագրքեր, այլ և Հայաստան բառի գործածութիւնը։ Նորերս արգելվեց մինչև իսկ Հայաստանեայց եկեղեցի բառերի գործածութիւնը այն հիման վրա, որ այդտեղ էլ մտնում է Հայաստան բառը»։ Ճիշդ որ ծիծաղելի կը լինէր, եթէ ցաւալի չը լինէր։

—

Երէկ երեկոյեան Բագուից ստացանք հետևեալ հեռագիրը. «Գիմնազիայի աշակերտուհի Գլասբէրգին սպանող Բագատուրովի գործի քննութիւնը շարունակվեց երկու օր։ Զինուորական դատարանը վճռեց՝ մահվան պատիժ, կախաղանով։»

—

Լսում ենք, որ վաղվայ ծխական պատգամաւորների ընտրութեան հրաւիրատոմսերը Թիֆլիսի հայոց կոնսիստորիան ուղարկել է քահանաներին միայն մայիսի 16-ին երեկոյեան, և քահանաներն էլ սկսել են տարածել 17-ին, մինչդեռ պէտք է բաժանէին ամսիս 14-ից սկսած։ Երկու օրը շատ կարճ ժամանակ է բոլոր ծխականներին ժողովի հրաւիրելու համար։ Զարմանում ենք, որ Թիֆլիսի գործակալ երկու քահանաները այդքան անփոյթ են գտնվել դէպի իրանց ուղղակի պարտաւորութիւնները։ Լսում ենք նոյնպէս, որ մի քանի նախագահ քահանաներ չեն ստացել պաշտօնական տեղեկութիւն այն փոփոխութիւնների մասին, որ եղել են «Կանոնքի» մէջ։

—

«Էյտէրի գործակալութեանը Կ. Պոլսից հեռագրում են յունիսի 9-ից հետևեալը. «Ցեղափոխական մասնաժողովը կիրակի օր այստեղի բոլոր եկեղեցիները նամակներ ուղարկեց, որոնց մէջ մահվան սպառնալիքներով արգելում է քահանաներին յիշել աղօթքներում պատրիարքի անունը, որը «ժողովրդի դաւաճան է դարձել»։ Տեղի ունեցան շատ խուզարկութիւններ և կալանաւորութիւններ։ Մի քանի քահանաներ են կալանաւորված»։

—

Գալիցիայում մայիսի 29-ից մինչև յունիսի 4-ը խօլերայից հիւանդացել են՝ Բօրչչովում 24, մեռել են 12, Գուսիատինում հիւանդացել են 2, Նիսկօում հիւանդացել են 5, մեռել են 4, Տարնօրժէում հիւանդացել են 4, մեռել են 3 հոգի։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Թիֆլիսից, Լևոն Տէր-Կարապետեանից 1 ռուբլի և նրա միջոցով՝ Աբրօքակերտ գիւղի դպրոցի աշակերտական երեկոյթից ստացած՝ 4 ռուբլի. 2) Գօրիսից. Յովհաննէս Դանիէլեանի միջոցով հանգանակած 23 ռ. 45 կոպէկ. նուիրատուներն են. Ա. Եօլեան 5 ռ, տիկին Մինասեանց 2 ռ., օր. Ց. Մալխասեանց 1 ռ., օր. Մ. Բէգզադեանց 1 ռ., օր. Մ. Միրումեանց 1 ռ., Կ. Գրիգորեանց 1 ռ., Պ. Տէր-Յովհաննէսեանց 1 ռ., Զ. Տէր-Յովսէփեանց 1 ռ., Ն. Միրումեանց 1 ռ., Գ. Մաշուրեանց 1 ռ., Գ. Թօրոսեանց 1 ռ., Յ. Իւզբաշեանց 1 ռ., Բ. Շիրազեանց 1 ռ., Н. Папировскій 50 к., С. Петровъ 50 к., А. Тырыданова 50 к., Հ. Տէր-Մկրտչեանց 50 կ., Դ. Տէր-Դաւթեանց 50 կ., Բ. Վօսկանեանց 50 կ., Բ. Տէր-Յակոբեանց 50 կ., Մ. Անանեանց 50 կ., տիկին Պարոնեանց 45 կ., Յ. Դ. 1 ռ. 3) Հաղրութից, Կարապետ քահանայ Բաբասեանի, Աւագ Խաչանեանի և Մարգարէ Խուբլարեանի միջոցով 12 ռուբլի, 4) Թիֆլիսից, մի ոմն՝ 1 ռուբլի։ Ուրեմն նախկին 3309 ռուբլի 28 կ. հետ այժմ ունենք 3350 ռուբլի 75 կ.։

—

Բուդապէշտում հրատարակվող թրքամոլ «Revue d'Orient» լրագիրը հերկուլեան սիւներին է հասցնում իր կոչնապահ ոգին։ Այդ լրագիրը իր № 24-ի մէջ յայտնում է, որ սուլթան Աբդուլ Համիդի գահը բարձրանալու օրից, այն է 1876 թւից, Թիւրքիայում բացվել են 25,000 դպրոցներ, որոնց մէջ ուսանում են 1,250,000 աշակերտներ։ Երջանիկ երկիր. հետաքրքիր է միայն իմանալ, թէ ինչով է ուրեմն լրագիրը բացատրում այն հանդամանքը, որ ոչ մի երկրում տգիտութիւնը այնքան խոր արմատ չէ ձգել, ինչպէս այդտեղ։

—

Էջմիածնից մեզ գրում են. «Ադափիրեան եպիսկոպոսը ճանապարհ ընկաւ Վերին-Ագուլիս, ուր, իր խնդիրքով, կարգված է Թովմայ Առաքելի վանքի վանահայր։ Նա թողեց Բեսարաբիայի թեմի կառավարչի պաշտօնը։ Եպիսկոպոսը 1,000 ռուբլի է թողել Գայիանէի վանքի նորոգութեան համար»։

—

Երեւանից մեզ գրում են. «Ամսիս 10-ին, այգիում, քէֆի ժամանակ մի անուանի թուրք խանի որդին սրի մի հարուածով սպանեց մի այլ անուանի հարուստ թուրքի, որից յետոյ ինքը անձամբ պոլիցիային ներկայացաւ և բանտ ուղարկվեց. սպանութեան պատճառը «կնոջ պատմութիւն է»։»

—

Սաղմոսերգ գիւղից մեզ գրում են. «Մեր դպրոցի ուսուցիչ՝ Մարգար Սահակեանցի և հոգաբարձութեան յորդորանքով հասարակութիւնը նուիրեց յօգուտ սովեալների 47 ռ. 20 կոպէկ։ Այդ գումարը հասարակութիւնը հաւաքել էր, հնաւանդ սովորութեան համեմատ, մատաղի համար, բայց ժողովուրդը կարեկցելով սովեալներին, փողի մեծ մասը յատկացրեց սովեալներին։ Գովելի է գիւղացիների այդ վարմունքը»։

—

Վլադիկավկազից մեզ գրում են. «Տեղական դպրոցների քննութիւնները վերջացան մայիսի 30-ին, իսկ յունիսի 5-ին կատարվեց տարեդարձը։ Այդ օրը դպրոցի աւագ-ուսուցիչ Բ. Մելիքեանց և ուսուցչուհի տիկին Մելիքեանց, որոնց ուսուցչական ասպարիզում գործելու 15 տարին լրացաւ, իսկ Վլադիկավկազում վեցերորդ տարին, արժանացան հասարակութեան շնորհակալութեան ցոյցին։ Հանդիսի ժամանակ, ժողովրդի կողմից, Մ. Տէր Աբրահամեանց ներկայացրեց ուսուցիչ պ. Մելիքեանցին մի մեծ արծաթեայ ընծայ, որի վրա գրված էր՝ «ընծայ ուսուցիչ Բաղդասար Մելիքեանցին Վլադիկավկազի հայ հասարակութիւնից», իսկ տ. Մէլիքեանցին, կենդանի ծաղիկներից մի փունջ։ Այդ համակրանքը անկասկած մեծ քաջալերութիւն է ուսուցչի համար, բայց նոյնքան էլ ապացոյց է, թէ ժողովուրդը գիտէ գնահատել մարդկանց»։

—

Շամախուց մեզ գրում են. «Չը նայած, որ մեր դպրոցների հոգաբարձական ընտրութիւնները դեռ անցեալ տարի են կատարված, բայց մինչև այժմս չեն հաստատված. չը գիտենք ինչ գաղտնիք կայ այստեղ. արդեօք թղթերը դիտմամբ ուշ են ներկայացված, թէ էջմիածնումն են ուշացնում։ Զարմանալի անտարբերութիւն»։

—

Հին-Նախիջեւանից մեզ գրում են. «Մայիսի վերջին օրերից արդէն, թէ քաղաքում և թէ շրջակայ գիւղերում գարու առատ հունձը սկսվել է։ Նոյնպիսի հունձ սպասվում է և ցորենի արտերից։ Պակաս բերք չեն խոստանում և խաղողի այգիները։ Մի քանի ծառապտուղներ արդէն վաղուց վաճառվում են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԶԻՄԻՐ ՊԷՐԻԷ

—

Հեռագիրը լուր բերեց, որ ֆրանսիական սենատի նախագահ Կազիմիր Պէրիէ ընտրված է 451 ձայնով ֆրանսիական հանրապետութեան նախագահ։

Պէրիէ ծնվել է 1847 թւին (ուրեմն նա այժմ միայն 47 տարեկան է) և վաղ է սկսել իր քաղաքական գործունէութիւնը։ 1874 թւից նա արդէն պատգամաւոր էր. 1878 թւին նա վարում էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնականի պաշտօնը, իսկ 1888 թւին—զինուորական մինիստրի օգնականի պաշտօնը։ Պէրիէ լաւ ֆինանսիստի համբաւ ունէր, և 1890 թւին ընտրված էր բիւդժետային յանձնաժողովի նախագահ։

Բայց ամենից շատ նա աչքի ընկաւ և բարձրացաւ 1892 թւին, պանամեան խայտառակութեան ժամանակ։ Այն ժամանակ, երբ հանրապետական բոլոր աչքի ընկնող գործիչները աւել կամ պակաս խայտառակված էին, նոր մարդկանց պահանջ զգացվեց և ամենից առաջ այդ նոր մարդը Պէրիէն էր, որը առանց դժուարութեան գրաւեց Ֆլոկէի տեղը։ Անցեալ տարի նա ստանձնեց Ֆրանսիական հանրապետութեան մինիստր-նախագահի պաշտօնը, երբ անարխիստները սարսափ էին գցել Պարիզի և հետևապէս ամբողջ Ֆրանսիայի վրա։ Կազիմիր Պէրիէ ֆրանսիական քաղաքականութեան ղեկավարի դերում այնպիսի ընդունակութիւններ և եռանդ ցոյց տուեց, որ գրաւեց բոլոր ֆրանսիացիների յարգանքը և վստահութիւնը։ Ահա այդ ժամանակից արդէն, երբ խօսք էր լինում հանրապետութեան նոր նախագահի ընտրութեան մասին, Պէրիէ ամենից հաւանական թեկնածուն էր համարվում։

Կազիմիր Պէրիէ միջոցներ ունեցող մարդ է, անկախ բնաւորութեամբ, աշխատասէր և բարեխիղճ։ Նա յայտնի է, որպէս որոշ հայեացքներ և որոշ աշխարհայեցողութիւն ունեցող մարդ։

ԺԱՆՏԱԽՏՐ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

—

Հօնգ-Կօնգից «Daily News» լրագրին հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները ժանտախտի տարածման մասին.

«Ժանտախտ հիւանդութիւնը Կանտօնից անցաւ Հօնգ-Կօնգ։ Ժանտախտը Կանտօնում, երկար ժամանակ կոտորածներ էր անում։ Երբ ժանտախտի առաջին նշանները երևացին չինական թաղերում, իսկոյն խիստ միջոցներ ձեռք առնվեցան՝ թէ բնակարանները ախտահանելով և թէ հիւանդներին առանձնացնելով։ Առանձին խիստ կանոններ հրատարակվեցին՝ մեռածներին թաղելու վերաբերմամբ։ Դժբաղդաբար, երաշտութիւնը շարունակվում է, իսկ դա շատ վտանգաւոր է համարվում ներկայ հանգամանքներում։ Բժիշկների կարծիքով, ժանտախտ տարածվելու պատճառը բացառապէս այն կեղտոտութիւնն է, որի մէջ ապրում են չինական աղքատ դասակարգերը, և ջրի պակասութիւնը։ Մեռնողների թիւը օրից օր աճում է։

Ժանտախտից մեռածներին թաղելու համար մի առանձին տեղ է յատկացրած, ուր թաղում են բոլոր նախազգուշութիւններով։ Գլխաւոր զբաղմունքն այն է, որ ոչ ոք չէ համաձայնվում ժանտախտից մեռածներին դագաղներում դնել և գերեզմանոց տանել նրանց։ Այդ պատճառով յաճախ, բրիտանական ոստիկանները ստիպված են լինում իրանց սեփական ձեռքերով դագաղներում տեղաւորել ժանտախտից մեռածների սնացած դիակները։ Բացի դրանից, հիւանդացող չինացիներից շատերը ամենևին չեն յօժարվում հիւանդանոց գնալ։ Տեղական ազգաբնակութիւնը առհասարակ ոչինչ չէ անում՝ ժանտախտի դէմ կռուելու համար և միայն օր ու գիշեր անց է կացնում փողոցներում՝ վառելով փամփուշտներ, որպէս զի մեղմացնի ժանտախտի աստուածութեան բարկութիւնը։

Կանտօնում ժանտախտը մեծ կոտորածներ է անում։ Փոխարքան, նահանգապետը և զանազան պաշտօնական անձինք քաղաքում հրապարակապէս մատաղներ մորթեցին չար ոգիների համար, յուսալով դրանով կանգնեցնել հիւանդութեան կործանիչ ընթացքը։ Ապացուցված է, ի միջի այլոց, որ այդ հիւանդութիւնը սպանում է և կենդանիներին, այնպէս որ 21,000 արնէաների դիակներ ժողովեցին և այրեցին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հօն-Կօնգում, յունիսի 3-ին և 4-ին, ժանտախտից հիւանդացել են 122, մեռել են 95։ Ընդամենը մինչև յունիսի 3-ը ժանտախտով մեռածների թիւը հաշւում են 1713 հոգի։

—«Daily Telegr.» լրագրի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, որ աւստրիական մամուլի կարծիքով, Անգլիան այժմ գտնվում է ընդհանուր ընտրութիւնների նախընթաց օրը, որոնց այս կամ այն կերպ վախճանը կախված կը լինի նրանից, թէ կարողանի արդեօք լորդ Ռոզբերիին համաձայնութիւն կայացնել ազատամիտ—ունիոնիստների հետ։ Լը-լրագիրն այդ առիթով նկատում է, որ այդպիսի համաձայնութեան մասին ներկայումս դռնէ խօսք չէ կարող լինել։

—Սիցիլիայից ստացվող լուրերը օրից օր յուզիչ են դառնում։ Բանւորները ահագին խմբերով թողնում են աշխատանքը, օրավարձի փոքր լինելու պատճառով, որը շատ անբաւարար է մանաւանդ այն պայմաններում, որ ստեղծվել են պաշարման դրութիւն յայտնելուց յետոյ։ Հանքերից շատերում գործերը կատարելապէս դադարած են։ Բակալմուտոում երեք հազար բանւորներ բազմաթիւ անկարգութիւններ արին, քանդեցին վերակացուների տները, ջարդեցին մեքենաները և այլն։ Ուրիշ տեղերում ընդհարումներ են տեղի ունենում ոստիկանութեան և զօրքի հետ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 15 յունիսի։ Լիոնում, Գրէնօբլում, Մարսէլում և Նէլիում կատաղած ֆրանսիացիները յարձակվում էին իտալացիների և նրանց պատկանող խանութների վրա։ Իշխանութիւնները յորդորում են հանգստութիւնը պահպանել և զինուորական ոյժով են պահպանում քաղաքը։—Հանրապետական դաշնակցութեան, հանրապետական ձախակողմի և սենատի ձախակողմեան կենտրոնի անդամների ընդհանուր ժողովում Պէրիէի թեկնածութիւնն ընդունվեց 144 ձայներով 179 քուէարկողներից։ Լիւկսէնբուրգեան պալատում կայացաւ սենատորների և պատգամաւորների ընդհանուր ժողովը, որ հրաւիրել էր սենատի դէմօկրատիական ձախակողմը։ Գումարվեցին զանազան ֆրակցիաներին պատկանող 250 պատգամաւորներ և սենատի դէմօկրատիական խումբը, բայց վիճաբանութիւնները այնպէս անկապ էին ընթանում, որ շատերը հեռացան, մանաւանդ կառավարչական հանրապետականները և արմատականները։ 40 բոպէից յետոյ նիստը փակվեց։

ԼՕՆԴՕՆ, 15 յունիսի, Եապոնիան առաջարկեց Չինաստանին ձեռք ձեռքի տուած գործել Կորէյում՝ ֆինանսական ռէֆորմներ մտցնելու համար այնտեղ։ Չինաստանը մերժեց, այդ պատճառով էլ Եապոնիան յայտարարեց, որ ինքն միայնակ կը գործի և Կորէյա ուղարկեց 6000 մարդ ու նաւատորմ։ Եապոնական զօրքերը ներկայումս գրաւում են մայրաքաղաքը և Կորէյի թագաւորը, երեի, գերի է բռնված։

Կ. ՊՕԼԻՍ, 15 յունիսի։ Երէկ այստեղ հասաւ խէդիվը, որին դիմաւորեցին սուլթանի պալատականները։

ՎԻԷՆՆԱ, 15 յունիսի։ Ունգարական ռէյխստագն ընդունեց դաւանութիւնների ազատութեան վերաբերեալ օրինագիծը և այն օրինագիծը, որի զօրութեամբ մովսիսական կրօնը հաւասար իրաւունքներ է ստանում ուրիշ դաւանութիւնների հետ։

ՎԷՐՍԱՅԼ, 15 յունիսի։ Կազիմիր Պէրիէ 451 ձայնով հանրապետութեան նախագահ է ընտրված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունիսի։ Յունիսի 16-ին առաւօտեան Նոցա Կայսերական Մեծութիւնները Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրօվնայի, Միխայիլ Ալէքսանդրօվիչ և Ալէքսանդր Միխայլովիչ Մեծ Իշխանների հետ վերադարձան Պետերբուրգ։

Կ. ՊՕԼԻՍ, 16 յունիսի։ Սերբիական թագաւորը

հասաւ այստեղ այսօր առաւօտեան, նրան դիմաւորեցին մեծ-վիզիրը և մի քանի դեսպաններ։

ՊԱՐԻԶ, 16 յունիսի։ Կոնդրէսում մասնակցողներն էին թուով 852 հոգի. քուէարկութեանը մասնակցում էին 845. Պէրիէ ստացաւ 451 ձայն (երկարատև ծափահարութիւններ), Բրիսսօն ստացաւ 195 ձայն, Դիւպիւի—97, Ֆեվրիէ—53, Արագո—27։ Երբ կոնդրէսի նախագահ Շալմել-Լակուր յայտնեց Պէրիէի ընտրութեան մասին, բուռն ծափահարութիւններ տեղի ունեցան։ Սոցիալիստները սաստիկ բողոքում են. նրանցից մի քանիսը բռունցքներ են ցոյց տալիս ընկերակիցներին, իսկ երբ Շալմել-Լակուր հաղորդում էր մնացած թեկնածուների ստացած ձայները, հետևեալ աղաղակներն էին լսվում. «Կեցցէ սոցիալական յեղափոխութիւնը, թող կորչի բէակցիան»։ Շալմել յայտարարում է. «Պէրիէ ձայների մեծամասնութիւն ստացաւ, յայտարարում եմ նրան ընտրված հանրապետութեան նախագահ»։ Ձախակողմը և կենտրոնը բուռն կերպով ծափահարում են. սոցիալիստները կրկին սկսում են աղաղակել. այդ աղաղակները ծածկվում են ծափահարութիւններով։ Քարտուղարը կարդում է նիստի արձանագրութիւնը, որը ապա փակվեց «Կեցցէ հանրապետութիւն» աղաղակներով։ Հանրապետութեան նախագահը ճանապարհ ընկաւ Վէրսայլից Սէվրի ճանապարհով, և անցաւ Բուլոնեան անտառի միջով. յաղթական կամարը և Ելիսեան դաշտերը։ Կոնդրէսի փակումից յետոյ, Դիւպիւի, բոլոր մինիստրների ուղեկցութեամբ, մտաւ նախագահի կարինէտը՝ նիստի արձանագրութիւնը կարդալու համար։ Պէրիէ արտասուախառն աչքերով պատասխանեց, որ ինքն խորին կերպով զգացված է այն պատիւից, որ իր վրա ամենածանր բարոյական պատասխանատուութիւն է դնում հանրապետութեան և դեմոկրատիայի առջև. մի և նոյն ժամանակ աւելացրեց. «Ես կը նուիրեմ իմ ամբողջ հայրենասիրութիւնը, եռանդը և իմ բոլոյաւա համոզմունքները այն մարդու նման, որին մենք բոլորս ողբում ենք»։ Լիազորութիւնները յանձնելու ծիսակատարութիւնից յետոյ, Պէրիէ շնորհաւորութիւններ էր ընդունում։—Զատաւոր-հանրապետական և պանդոկական լրագիրները Պէրիէի ընտրութեանը լաւ են վերաբերվում։ Կարծում են, որ նրա ընտրութիւնը մի տեսակ սպառնալիք է անարխիստներին։ Պառլամաւորների ժողովի սոցիալիստական խումբը քուէարկեց մի մանիֆէստ, որի մէջ բողոքում է Պէրիէի ընտրութեան դէմ, վերագրելով այդ ընտրութիւնը կղերականների դաշնակցութեանը, որոնք միանալով միապետականների և կապիտալիստների հանրապետութեանը, պատրաստվում են կործանել հանրապետութիւնը։—Պէրիէ ժամանեց արտաքին գործերի մինիստրութիւնը Դիւպիւի ուղեկցութեամբ և կիրարիների պատուաւոր հեծելախմբով։ Երբ կառքը դուրս եկաւ բակը, զինուորական երաժշտութեան խումբը նուագեց մարսէլիէզ և շինութեան վրա ծածանվեց ազգային դրոշակ։ Դրան մօտ նոր նախագահին դիմաւորեցին հանգուցեալ նախագահի զինուորական սվիտալի օֆիցէրները։ Դիւպիւի յանձնեց նախագահին իր հրաժարականի խնդիրքը։ Վաղը «Journal Officiel» պաշտօնական թերթում յայտարարված կը լինի, որ այժմեան մինիստրներին յանձնված է գործերը վարել։ Երեկոյեան Պէրիէի գնաց երկրպագելու Կարնոի նշխարքին, այցելեց և ցաւակցութիւն յայտնեց տիկին Կարնօին։—Պէրիէ ատորագրեց՝ Կարնօին Պանթէօնում թաղելու հրամանը։ Կառավարութիւնը 50,000 ֆրանկի կրէդիտ կը պահանջի թաղման համար։—Նոր մինիստրութեան կազմակերպութիւնը յանձնված է Բիրդօին։—Պէրիէ վճռեց չը հետևել այն արձանագրութեանը, որի զօրութեամբ հանրապետութեան նախագահը պարտաւոր է անձամբ ներկայ լինել իր նախորդի թաղման ժամանակ։

ԲԵՐԼԻՆ, 16 յունիսի։ Երէկ Մէաց հասան հազարից աւելի իտալացիներ, որոնք հեռացել են Ֆրանսիայից. դրանցից շատերը թողել են իրանց ձեռնարկութիւնները. այդ իտալացիների մեծ մասը ստիպված են անտուն, անտէր մնալ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վիներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։
Կ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.
Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1—1½ ժ. ականջի, կոկորդի, և քթի.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլեի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Խնդրում եմ խմբին, ամառվայ արձակուրդներից յետոյ, ժողովվել սոյն տարվայ սեպտեմբերին։ Տեղի և ժամանակի մասին կը յայտարարվի „Մշակում“։

Իմ հասցէն է։ Тифлисъ, Вокзалъ, Кара-Мурза.

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ.

(№ 66) 2—3

„ՏԱՐԱԶ ԵՒ ԱՂԲԻՒՐ“

Շարունակվում է ներկայ 1894 թուականի բաժանորդագրութիւնը։

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Աղբիւրի“ տարեկան գինը 3 ր. է, կէս տարվանը՝ 2 ր., իսկ „Տարազինը“՝ 6 ր. (№ 1-ից բոլոր №№-ը), կէս տարվանը՝ 3 ր։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, редакція „Арбюръ“ կամ „Таразъ“.

(№ 65) 2—5

ԱԲԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա. Հատորի գինն է . . . . . 3 ր.
Բ. Հատորինը „ . . . . . 4 ր.

Վաճառվում է Խիզդեկէլի գրավաճառանոցում, Գօլովինսկի պրոսպեկտ։

Գրավաճառներին 10% զիջումն։

(№ 58) 6—10

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ ունի 5 դ. կարգի իրաւունք և երեք տարի պարապել է ուսուցչութեամբ, ցանկանում է հայոց ծխական դպրոցներում ունենալ ուսուցչի պաշտօն Ռուսաց լեզուից և թուաբանութիւնից։

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Астрахань, въ Армянское Агабабовское училище, учителю Вардану Аветовичу Шелковникову. (մամ. 2) (№ 67) 3—5

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՐՕԻՆՕՎԻ ՄՕՏ

Վաճառվում են ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ լուսանկար պատկերները.

1) Մեծադիրը, պատից կախելու, ճանապարհածախսով հանդերձ—3 ռուբլի։
2) Կաբինէտային, ճանապարհածախսով—40 կ.։

Ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով.

Тифлисъ. Фотографія Роинова, на Эриванской площади. Կարելի է ստանալ և վերադիր վճարով (наложн. платежъ). (№ 51) 9—10

Խնդրվում է հայ հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ ցանկացողներին, որ բարեհաճեն իրանց հեղինակութիւններից, թարգմանութիւններից և ուսնեցած գրքերից մի-մի կամ մի քանի օրինակ նուիրել ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ,

Ցանկացողները պէտք է ուղարկեն այս հասցէով. M-r N. Karapetian, 439, P. O. Rox. WORCESTER, MASS, E. U. d'AMERIQUE. 3—10

Իմ հրատարակած ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻ Թիֆլիսի բաժանորդները թող բարեհաճեն դիմել պ. Լևոն Մելիք-Աղամեանցին՝ Малая Орбеліановская ул. № 24, д. Демурова և ստանալ բառարանի Բ. հատորը. իսկ օտարաքաղաքացի բաժանորդները՝ Բաթում՝ ինձ։

Աբիսողոմ Յովհաննիսեանց

(№ 58) 3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,

ժընէվի համալսարանի Հասարակական գիտութիւնների մագիստրանտը, ԿԱՄԵՆՈՒՄ Է ՊԱՏՖԱԿՈՒԼՏԷԱԼ ՄՈՒԹԵԱՆ կամ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ ունենալ հայոց հոգևոր դպրոցներից մէկում։

Պայմանների համար մինչև օգոստոսի 1-ը դիմել „Մշակի“ խմբագրատուն, յանձնելու Վ. Փափազեանցին։ (№ 68) 2—5

Սրբազան առաջնորդի հրամանով, առաջիկայ կիրակի, ամսիս 19-ին, առաւօտեան 12 ժամին, ս. պատարագից յետոյ, նշանակված է քաղաքիս բոլոր եկեղեցիներում երեք-երեք պատգամաւորների ընտրութիւն Ներսիսեան Հոգևոր դպրոցի հոգաբարձական ընտրութեան համար. ուստի հրաւիրվում են ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցող ծխականները նշանակեալ օրը և ժամին ներկայ լինել իրանց եկեղեցին՝ ընտրութեանը մասնակցելու համար։

Գործակալք եկեղեցեաց հայոց ա. և բ. մ. Տփխիսոյ՝ Գիւտ քահ. Աղանեանց
Համազասպ քահ. Տէր-Յովհաննիսեանց

(№ 65) 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազարեանցի փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

№ 62 5—32

ԴԵՂ ԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

դեղերի, մորթին դեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. Հիւանդանոցի տակ։

(№ 67) 81—100 (ե. 2.)

Ի. Ե. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Ցանձն է առնում ՀԱՇԻՒՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, վակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։

Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇՂ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում։

Ուսուցանում է։

ՀԱՇԻՒՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար՝ Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։

(№ 16) (2) 18—100

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և թոշակաւոր աշակերտներ։ Պատրաստում է կլասիքական գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար։

Թիֆլիս, Գանօվսկայա փողոց, № 11, սեփական տուն։

(եր. և շ.) 23—25

(№ 35)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նումէրներ որոնց սարք ու կարգը ամենալաւ արտաստմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նումէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-դրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվճար։ Կայ ռէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիսներ։

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 87—130 (2.)

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Іюня 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.